ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 հունվարի 2023 թվականի N 23-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2009Թ. ՆՈՅԵՄԲԵՐԻ 2-Ի N 62-Ա ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԲԱՐՁՐԱՐԺԵՔ ՀՈՂԱՏԵՍՔԵՐՆ ԱՎԵԼԻ ՑԱԾՐԱՐԺԵՔ ՀՈՂԱՏԵՍՔԵՐԻ ՓՈԽԱԴՐԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի սեպտեմբերի 17-ի «Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսական նշանակության հողերի հողատեսքերի փոփոխման կարգը հաստատելու մասին» թիվ 1066-Ն որոշման 2-րդ կետը

Ո ր ո շ ու մ եմ

1. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետի 2009թ. նոյեմբերի 2-ի «Գյուղատնտեսական բարձրարժեք հողատեսքերն ավելի ցածրարժեք հողատեսքերի փոխադրելու նպատակով հանձնաժողով ստեղծելու մասին» N 62-Ա կարգադրությունը:

2. Գյուղատնտեսական բարձրարժեք հողատեսքերն ավելի ցածրարժեք հողատեսքերի փոխադրելու նպատակով ստեղծել հանձնաժողով՝ համաձայն հավելվածի:

Հ. ՂԱԼՈՒՄՅԱՆ

30.01.2023

X

ՀԱՅԿ ՂԱԼՈՒՄՅԱՆ

30 հունվարի 2023թ.
ք. Իջևան

Հավելված
ՀՀ Տավուշի մարզպետի 2023թ. հունվարի 30
թիվ 23-Ա որոշման

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄ

Հ. Ղալումյան	-	Հանձնաժողովի նախագահ, ՀՀ Տավուշի մարզպետ
Ա. Նազարյան	-	Հանձնաժողովի քարտուղար, ՀՀ Տավուշի մարզպետարանի հողաշինության և հողօգտագործման բաժնի վարիչ
Վ. Սուքոյան	-	Հանձնաժողովի անդամ, ՀՀ Տավուշի մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ
Ա. Սուքիասյան	-	Հանձնաժողովի անդամ, ՀՀ շրջակա միջավայրի նախարարության հողերի և ընդերքի քաղաքականության վարչության գլխավոր մասնագետ
Զ. Մարդանյան	-	Հանձնաժողովի անդամ, ՀՀ էկոնոմիկայի նախարարության «Գյուղատնտեսական ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ-ի մոնիթորինգի և տեղազննության իրականացման բաժնի գլխավոր մասնագետ
Գ. Գասպարյան	-	Հանձնաժողովի անդամ, ՀՀ ԷԵԲՊՆ ջրային տնտեսության պետական կոմիտեի «Տավուշ> ՋՕ-ի «Իջևան-Ուտիք» տեղամասի պետ
Ջ. Թադևոսյան	-	Հանձնաժողովի անդամ, Կադաստրի կոմիտեի գեոդեզիայի և հողաշինարարության վարչության հողաշինարարության բաժնի գլխավոր մասնագետ
	-	Հանձնաժողովի անդամ, համապատասխան համայնքի ղեկավար (համաձայնությամբ)

/ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ Ա.ԳԵՎՈՐԳՅԱՆ